ՎԱՐԺԱՐԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՍԱՐՏ 1883 Մ. ՏԱՐԻ № 8

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՔՆԵԼՈՒՅՑ ԱՌԱՋ. *)

Երբ օր դու սիրուն, նազելի մանկիկ
Դիշերն անկողնոց ուզենաս մտնել,
Եւ քաղցը գգուանքով քո դիմաց մայրիկ
Մօտդ թեկն ընկած քեզ նանիկ երգէ.

Իսկ գուրսը սառուցիկ ձիւն լինի բրգում,
Յուրա քամին փչում ու խաղնվում քուք,
Բայց դու լոյս ու տաք քո ննջարանում
Քնելիս լինես իաղաղ ու անփոյթ.

Յիշիր, սիրելի, որ շատ տեղերում
Կան որբ երեխայք, ծնողներից զրկուած,

*) Семья и школа, 1879, № 3.

Միայնակ մնացած օտարի ձեռքում,
Զուներն մի ոքմին իրանց հարազատ։

—

Զուներն ննջարան քեզ պէս տաք ու լոյս
Եւ ոչ անկողին փափուկ ու մաքուր,
Զուներն գգուող մայր և ընաւ մի յոյս,
Զոր տախտակի վրայ պառկած են մթնում։

—

Յիշէր, որ դաշտում, մեզանից հեռու
Շարքով գնում են հազիւ շարժուելով
Բարձած սայլերը, փող վաստակելու,
Լծած տաւարը սաստիկ տանջելով։

—

Եւ վրան նստած սառած սայլապան
Անկարող անգամ ձեռքը շարժելու,
Այլ տեղն ընկած տեղը խեղճն իբրև անբան
Ուսերով օգնում սայլին շարժ տալու։

—

Յիշէր դու որդեակ, այս թշուառներին,
Խոստացէր, ուխտէր քո սրտի մէջում,
Որ չես մոռանալ կարօտեալներին,
Այլ երբ մեծանաս, նոցա կօգնես դու։

—

Կօգնես խղճալով, որքան կարող ես
Նոցա, որ խեղճ են և անօգնական,
Կօգնես միշտ գործքով, ամէն ջանք կանես
Մեղմացնել նոցա ցաւը դառնութեան։

—

Եւ միայն յետոյ, յետոյ, սիրելի,
Երբ այս խոստումը տաս դու Աստուծուն,
Աչքերդ խփէր և հանդարտ ննջէր,
Քունդ անոյշ լինի և խիղճդ արթուն։

Գ. Տ. Ա.

ՆՈՒԱԳԱՄՈՒ ԱՌԱՂԱՂԸ.

(Թարգմանութիւն Ֆրանսերէնից).

«Ինչպէս երգեցի,» հարցրեց աքաղաղն իւր սիրելի հաւին։

—«Հիանալի» պատասխանեց հաւը։

—«Ես թառ կը լինեմ, շարունակեց աքաղաղը, և կը սկսեմ նորից երգել, որ բոլոր հաւնոցը լսի։ Բոլորին ասէք, որ ականջ դնեն։

Աքաղաղը թառ եղաւ, թևերը թափ տուեց, վիզն երկարացրեց և բարձրաձայն երգեց։ Յետոյ, գոհ իւր անձից, գլուխը մի կողմի վրայ կախ գցած, նա աչքը գցեց իւր ներքևը ցանկի առաջը հաւաքուած հաւերին։ «Գեղեցիկ է» ասաց նրա սիրելի հաւը։

«Սքանչելի է» գոռաց սպիտակ հաւը, նորանից յետոյ թուխ հաւը, մոխրագոյն հաւը և յետոյ միւս բոլոր հաւերն ու փոքրիկ ճուտերից նոքա, որոնց կտուցները լիքը չէին կտով։

Մի սարեկ սկսեց երգել։

«Լսում էք այս փոքրիկ պճնասէրին» ասաց աքաղաղը, սէգ ճեմելով և անարգական կերպով նայելով փոքրիկ թռչնիկին, որ նուագում էր իւր ամենասիրուն երգը։

Բոլոր հաւերն արհամարհանքով կչկչացին։ «Ահ պստիկ, ասաց աքաղաղը սարեկին, դու շատ բարի ես, բայց երաժշտութիւնից ոչ մի խաղ չը գիտես։ Լաւ կանես ինձ ականջ դնես»։

Եւ նա նորից բարձրաձայն երգեց, քանի ուժումը ուժ կար։ Հաւերը, մի ոտի վրայ թառած, գլուխները կախ գցած, աչքերը փակած, խելքամաղ եղած ականջ էին դնում նրան։

Հէնց այդ ժամանակ բակի շունը դուրս եկաւ իւր բնից, քնահարամ եղածի նման ճլմկոտալով։

«Հը, երգելս լսեցի՞ր» հարցրեց նորան հպարտութիւնից փքուած աքաղաղը։

—«Լսեցի՞։ Ես շատ կը ցանկանայի իմանալ, թէ արդեօք ո՞ր Աստծու օրհնած էակ կարող է երգելդ չը լսել։ Ոչ ցերեկն ես ձայնդ կտրում, ոչ գիշերը, և եթէ մեկ մեկ աչքերդ ու կտուցդ փակում ես, ես ստիպուած եմ լինում արթուն մնալ քեզ աղուէսից պահպանելու համար»։

Աքաղաղն ապշած, կատարը թափ տուեց, իսկ հաւերը սկսեցին միմեանց ականջին փսփսալ։ «Իմ հաւերին հարցրո՛ւ,» ասաց բարկացած աքաղաղը։

—«Ի՞նչ. քո հաւերին։ Թող, Աստուած սիրես, նոքա միմիայն քո երգելն են լսել և եթէ, պատահմամբ, նոցանից մինը քեզ չի հնազանդում, չես թողնում որ կտին մօտենայ։ Դու միայն իւրերին զարթեցնելու համար լաւ ես. թէ չէ կարողանաս մի իսկական արուեստագէտի հիացնել, հաւատալս չի գալիս։ Գոռալն ու երգելն իրարից շատ հեռու բաներ են։ Եթէ դու իմ ճանաչած անապարծներից ամենապարծենկոտը չը լինէիր, չէիր յանդգնի սարեկին քննելու։

—«Երևում է քունը խանգարել եմ». ցած ձայնով ասաց աքաղաղը հաւերին։

Հաւերի գլուխն անցած, նա դիմեց դէպի հաւաքունը։ Այնտեղ թևերը թափ տուեց և նորից երգեց, բայց ոչ առաջուայ վստահութեամբ։

Հաւերն ամենևին չէին համարձակւում բարձրաձայն նկատողութիւն անել, բայց, ցած ձայնով, իրանց մէջ շատ անգամ ասում էին.

«Մեր աքաղաղն էլ շան բնի մօտ չի երգում։ Մեր շունը նորա ինչ եղածը լաւ ասաց»։

Տ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

Ո՞Վ ՍՏԱՑԱՒ ՊԱՐԳԵՒԸ

(Դպրոցական կեանքից)

Հարցաքննութեան օրը մօտենում էր։ Թ*** քաղաքի օրիորդաց դպրոցի աշակերտուհիները, որ մինչև այդ ժամանակ թոյլ էին պարապում, սկսեցին աւելի եռանդով պատրաստել իրանց դասերը, որ չը վշտացնեն իրանց ծնողներին։

Ուսումնարանի հանդիսաւոր տարեդարձին նշանակուած էր երկրորդ դասատան համար երկու պարգև. մինը՝ ամենագեղեցիկ նկարի, իսկ միւսը հայկական ընտիր շարադրութեան համար։ Ուսումնարանում օրիորդները միայն պարգևների մասին էին խօսում։

«Ի՞նչ ես կարծում, Արուսեակ, ո՞վ կ՚արժանանայ նկարի համար նշանակած պարգևին, հարցրեց Վարսենիկը իւր ընկերուհուց»։

Արուսեակն իսկոյն չը պատասխանեց, բայց նայելով իւր հանդէպ նստած դանգրահեր օրիորդին, ասաց.

—Ես կարծում եմ, որ մեր դասատանը միայն երկուսը կարող են արժանանալ պարգևի. Հեղինէն և Վարդանոյշը։ Հեղինէն թէ և ընդունակ է, բայց Վարդանոյշը նորանից աւելի աշխատասէր է, և այս պատճառաւ երկուսն էլ կ՚արժանանան։

Թէև Արուսեակը կամաց էր խօսում, բայց Հեղինէն արդէն լսել էր բոլորը և ժպտալով ասաց իւր ընկերուհուն։

«Շնորհակալ եմ քեզանից, օրիորդ. հաստատ հաւատացած եմ, որ պարգևը ես կը ստանամ»։

—Ի՞նչուր ես այդպէս կարծում։ Եւ ուղիղն ասած,

դու շատ ծոյլ ես, և միշտ դասերդ այնպէս չես պատրաստում, ինչպէս հարկն է, թէև դու քո ընդունակութեամբ կարող էիր քո բոլոր ընկերուհիներից գերազանցել։ Այդ պատճառաւ էլ, աւելացրեց Արուսեակը, Վարդանոյշը կարող է քո վտանգաւոր հակառակորդը լինել։

«Ի՞նչ ես զուր տեղը խօսում. Վարդանոյշը երբէք չի կարող իմ հակառակորդը լինել. նա ո՛չ շնորհք ունի, ո՛չ փառասիրութիւն։ Մի լսէր, է՜, Ատուած սիրես. երէկ մօրաքրոջս տունն գնալիս, տեսայ որ Վարդանոյշը իրանց տան առաջ կանգնած, պատի վերայ կաւիճով բազէ էր նկարում՝—իւր փոքրիկ եղբօրը զուարճացնելու համար։ Իսկ եղբայրը բերանը բաց նայում և հիանում էր քրոջ հրաշալի նկարի վերայ»։

—Ի՞նչ անենք, ասաց Արուսեակը. դորանից երեւում է միայն նորա բարութիւնը, և այդ պատճառաւ էլ նա արժանի է, որ մենք սիրենք և պատուենք նորան։ Ուրեմն, Հեղինէ, ես նախազգուշացնում եմ քեզ, և եթէ ուզում ես անպատճառ պարգևն ստանալ, աշխատիր և առաջուանից էլ աւելի շատ. ապա թէ ո՛չ, հաւատացնում եմ քեզ, որ երազումդ էլ չես տեսնի պարգևը։

«Շատ մի խօսիր։ ես գիտեմ թէ ինչ եմ անում. ես հաստատ համոզուած եմ որ պարգևն ինձ կընկնի»։

Վարսենիկն ու Արուսեակը տեսան, որ այլ ևս աւելորդ է նորա հետ խօսել և լռեցին։ Բայց Արուսեակի կասկածները արդարացան։ Հեղինէն հաւատացած լինելով, որ ինքը իւր ընկերուհիներից գերազանց և յառաջադէմ է, առաջուան պէս ծուլանում էր, և երբ հարցաքննութեան ժամանակը մօտեցաւ, ձեռաց մի քանի բոպէում նկարելով թղթի վերայ իւր առաջուց դրած օրինակից պատկերը, մի կողմը ձգեց։ Իսկ Վարդանոյշը, որը ընդհակառակն, մի համեստ և աշխատասէր օրիորդ էր, բոլոր իւր ազատ ժամանակը զործ էր դնում,

որ իւր սիրած նկարը, որքան կարող է, գեղեցիկ լինի։

Վերջապէս վաղուց ցանկալի օրը հասաւ, երբ դրպրոցի հանդիսաւոր տարեդարձը պիտի տօնուէր։ Պատարագից յետոյ ծնողների խուռն բազմութեամբ լցուեց դպրոցի դահլիճը։ Հեղինէն համոզուած էր, որ բոլոր ժողովուրդը նորան պիտի գովէր, իսկ նկարի համար նշանակած պարգևը կարծես թէ արդէն ձեռին ուներ բռնած։ Նա նոյնպէս ոչ ոքից չէր թաքցնում, թէ երկրորդ պարգևն էլ ինքը կը ստանայ։ Երբ նա յայտնեց Արուսեակին իւր կարծիքը, վերջինս ժպտաց, որը դուր չ'եկաւ Հեղինէին և արհամարհանքով յետ քաշուեցաւ։ Բայց և այնպէս, այսքանը միայն պարզ էր, որ նա յաջող քննութիւն չէր տուել։ Նորա ընկերուհիներից շատերը, որ նորանից շատ և շատ թոյլ էին, նորանից աւելի լաւ էին պատասխանում, այնպէս որ կարելի է Հեղինէն իւր կեանքում առաջին անգամն էր իրան ամօթահարուած զգում։

Հեղինէն շատ վշտացաւ, երբ տեսաւ որ հայկական շարադրութեան համար նշանակած պարգևը ոչ թէ ինքն ստացաւ, այլ Արուսեակը, որը Հեղինէի կարծիքով, հայերէնից ոչինչ չը գիտէր։

«Կը սպասենք մինչև վերջը», մտածեց նա. «ընկերուհիներս կարող են ինձ գերազանցել բոլոր առարկաներում, բայց նկարչութեան մէջ՝—երբէք։ Այն ժամանակ թող նոքա ինձ ծաղրեն»։

Այժմ ինքդ դատիր, ընթերցող, թէ ինչպէս ամօթահարուեցաւ և տխրեցաւ նա, երբ փառակազմ պատկերազարդ գիրքը ընծայեցին էլի ոչ թէ իրան, այլ օրիորդ Վարդանոյշին, նորա հիանալի նկարած գեղեցիկ պատկերի համար։

Իսկ խեղճ Վարդանոյշը, այդ համեստ և աշխատասէր օրիորդը, նայում էր պարգևին և իւր աչքերին չէր հաւատում....։ Այդ օրը ամէնքը գովասանքով էին ար-

տասանում Վարդանոյշի անունը, իսկ ծանօթները շնորհաւորում էին նորան....:

Այդ օրը Հեղինէն ստացաւ բաւականին դառն, բայց և այնպէս, շատ օգտակար դաս. և երկար ժամանակ նորա մտքից չէր դուրս գալիս այդ հանդէսը, որը ուրախութեան փոխանակ, տրտմութեամբ էր լցրել անհոգ օրիորդի սիրտը:

Այնուհետև նա այլ ևս չէր ծուլանում, և յոյսը միայն իւր ընդունակութեանց վերայ չէր դնում և պարծենում, այլ աշխատում էր ջանասիրութեամբ զարգացնելու Աստուծոյ տուած շնորհքը:

Եթէ ընթերցող, երբ և իցէ պատահես Հեղինէին, նա կը պատմէ քեզ, թէ ինչ զգաց նա, երբ իմացաւ, թէ ո՞վ ստացաւ պարգևը:

Փոխադրեց Գ. ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ.

ՃՇՄԱՐՏԱՍԷՐ ՄԱՆՈՒԿ *)

Տիգրանին որ տեսաւ նորա ոտաբոբիկ փոքր եղբայր Աշոտը, ուրախ ուրախ մօտեցաւ նորան և սկսեց հարց ու փորձ անել:

—Դուք էլ ժամանակ էք գտել դատարկ խօսելու, ընդհատեց նոցա խօսակցութիւնը մայրը: Հազիւ որ մի եկար. վաղուց ես քեզ սպասում էի: Ահա քոյրդ կաթն է խնդրում և գնացող չը կար: Հռիփսիմէն շտապում է կարը վերջացնել, իսկ Աշոտը բոբիկ է: Վազիր շուտով բաղարը և մեր ծանօթ խանութպանից վեր առ մի հինգ

*) Տե՛ս „Վարժարանի" Մանկական բաժին № 7.

կոպեկի կաթը. ասա թէ «Հայրս ստացաւ 5 ռուբլիանոց, իսկ մայրս չուղարկեց, վախենալով որ ես չը կորցնեմ ճանապարհին. մայրս յետոյ կը բերէ փողը»։

—Յետոյ Հայրս իրաւ ստացել է փողը. Հարցրուց Տիգրանը։

—Եթէ ստացած լինէր, էլ ո՞ւր էինք այսպիսի ցուրտ սենեակում նստում, կրակ կանէինք։

—Ուրեմն, մայրիկ, ես նրան պիտի ասեմ. ասաց Տիգրանը։ Չէ, ես այդպէս չեմ ասի, այլ թէ կամենում էք այնպէս կը խնդրեմ որ տայ։

—Ի՞նչ կը տայ, ողորմելի, նա այնպէս մարդ է որ ձրի տա։ Անցեալ օրը չէր որ թէյի համար գնացիր ու չը տուեց։ Գնա, ասում եմ և ասա ինչպէս սովորեցրի։

—Ո՛չ, մայրիկ, ես այդ չեմ կարող, վճռողական պատասխանեց Տիգրանը, չեմ գնալ սուտ խօսելու։

—Տիգրան ջան, ես քաղցած եմ, ուժեղ եմ ուզում, գնա՛ Հոգիս, մի փոքր կաթը բե՛ր ինձ համար, աղերսալի ձայնով աղաչում էր անկողնում պառկած փոքրիկ աղջիկը։

—Որդի՛, մեղք է երեխան, գնա՛ բե՛ր կաթը, ասում էր մայրը։ Գողութեան հօմ չեմ ուղարկում։ Կարելի է, Աստուած տայ, Հայրդ իրաւ փող բերէ և մենք էլ վճարենք խանութպանին։

—Չէ՛, չեմ գնալ, գոչեց մանուկը և նստեց աթոռի վերայ։

—Մ՛այրիկ, նոր այժ ստացած դարձաւ հիւանդ աղջիկը դէպի իւր մայրը, տեսնում էք որ դա սատանայի ձիու վերայ է նստել, ինձ չէ խնայում. ուղարկեցէք գոնեա Աշոտին, նա թող հագնի Տիգրանի ոտնամանը և գնայ։

Մայրը հաւանեց այդ միտքը և Աշոտին հագցնելով Տիգրանի կօշիկները ուղարկեց բազարը։

Հինգ ըսպէից յետոյ Աշոտը ուրախ ուրախ բերեց տուն մի ձեռքով կաթը և մի ձեռքով հաց։

Հիւանդ երեխան ագահութեամբ վրայ ընկաւ կաթնին և մեծ բաւականութեամբ կերաւ հացով։

—Դիտե՞ս մայրիկ, պատմում էր Աշոտը, երբ որ ես խանութպանին ասացի թէ հայրս 5 ռուբլի է բերել, նա չը հաւատաց։ Ես նրան հաւատացնելու համար երդուեցի։ Նա թէ՝ հապա ինչու մայրդ չեկաւ և ուրիշ ապրանք էլ չէ տանում։ Ես ասացի թէ հիւանդին չուզեց միայնակ թողնել և չէր էլ հարկաւոր գալ քեզ մօտ, որովհետև հայրն ամէն բան բերեց հետը՝ և թէյ, շաքար, միս և հաց։ Եւ մայրս այժմ մեզ համար ճաշ է պատրաստում։

Մայրը ուշադրութիւն չէր դարձնում այս խօսքերին, իսկ Հռիփսիմէն ու Տիգրանը լաւ իմացան Աշոտի պատմածը։

—Լաւ ես սովորել, Աշոտ, սուտերը փչել, յանդիմանելով ասաց Հռիփսիմէն։

Իսկ Տիգրանը մտածում էր որ ինքն էր մասամբ փոքրիկ Աշոտի ատախօսութեան պատճառը։ Եթէ ինքը գնար, գուցէ առանց սուտ ասելու էլ բերէր կաթը։ Այս մտածմունքը տանջում էր նրան։

—Այս ինչե՞ր էք դարսել այստեղ, անպիտաններ, գրսից եկաւ յանկարծ հարբած հօր ձայնը։

Լսում էր որ մէկը այս կողմ այն կողմ ընկնելով, դիպչում էր նախասենեակում դարսած իրերին։

—Բաց արէք դուռը, չէ՞ք իմանում, որ ես եմ։

Հենց որ Աշոտը բաց արաւ դուռը, մտաւ ներս մի 50 տարեկան մարդ, մօրուքը խճճուած, կարմրաքիթ։ Հագուստը պատառոտած, գզգզուած և կօշիկները մաշուած, հարբած հօրը տեսնելով, հիւանդ աղջիկը ծածկեց երեսը վերմակով, իսկ Աշոտը թաք կացաւ Հռիփսիմէի յետևից։

—Ա՛յ մարդ, դու Աստծուց էլ չես վախենում, գոչեց կինը։ Էլի հարբել ես և ով է տալիս քեզ փողեր այդ անիծուած խմիչքի համար։

—Փողե՛ր. . . ես այժմ շատ փող ունիմ. . շատ, շատ . .

Հայրը թեք ընկաւ աթոռի վերայ և քունը տարաւ. այդ միջոցին ձեռքի բռնում մինչև այն ժամանակ ամուր հուսլ տուած փողը վայր թափուեց՝ մի երեք ռուբլիանոց և մի քանի սպիտակ փող։

—Ղորդ որ փող է բերել, զարմանքով ասաց կինը և վեր քաղեց գետնից։

—Երեք ռուբլիանոց և չորս հատ 20 կոպէկանոց և երկու 15 կոպէկանոց, ասաց կինը խնդալով. կը տանեմ իսկոյն 1 ռուբլին կը տամ տանտիրոջը, խանութպանին կը վճարեմ 1 ռուբլի և փոքր ինչ ուտելիք կառնեմ։

—Բայց չէ՞ որ կը զարթի, ասաց Հռիփսիմէն և կը պահանջէ իւր փողերը և եթէ չը գտնէ, անցեալ օրուան պէս կը ծեծէ ձեզ։

—Ո՛չ։ Ես մանր փողերը կը դնեմ նորա առաջ և կասեմ, որ սորանից աւելի չես բերել, երեւի փողոցումն ես կորցրել։ Հարբած է, մոռացած կը լինի։ Իմացաք ուրեմն երեխայք, հայրը որ զարթի և փողերը հարցնէ, կասէք՝ ոչինչ չը գիտենք և չենք տեսել, միայն այս սպիտակ փողը բերիր։

Ուրախութիւնից էլ չը կար կինը, որովհետև կարող էր այն փողերով այժմ տաքացնել սենեակը և կերակրել երեխանց։ Կարծես նոր կեանք ստացաւ նա և արագ արագ գլխին ծածկոցը դցելով գնաց բազարը։

Եւ մի փոքր ժամանակից յետոյ վառարանը փայտով լցուեց և կերակուր էր եփվում այնտեղ։ Հիւանդ աղջիկը նստեց անկողնի մէջ, որ կարողանայ տեսնել կրակի բոցը։ Իսկ միւս երեխայք շրջապատել էին վառարանի մօտ կանգնած մօրը։

Կերակուրը պատրաստուեց և երեխայք և նոցա մայրը մեծ ախորժակով կերան, որովհետև առաւօտից նոցա բերանը մի փշրանք չէր մտել։ Ամէնքն էլ նստեցան

յետոյ իրանց գործի. Հռիփսիմէն շարունակում էր իւր կարը, իսկ մայրը գուլպայ գործում։

—Երևի միտը կը գայ փողը և վայն եկել է մեր գլխին, ասում էր Հռիփսիմէն մօրը։ Անցեալ օրն էլ հարբած էր բայց չը մոռացաւ, որ ձեզ մի ռուբլի էր տուել։

—Ի՞նչ անեմ, Հռիփսիմ ջան, եթէ բոլոր փողը ձեռքը գցէի, նա ինձ միայն մի քանի կոպէկ կը տար և մեր ցաւերին ճար չէր լինի։ Այժմ էլ գիտես էլ չէ գալիս, կար չեմ կարողանում անել առաջուան պէս և ոչ լուացք, որ հօրդ ձեռքին նայելու կարօտութիւն չունենայինք։ Ինչ ուզում է անէ, ի՞նչ անեմ, գլուխը քարը։

Աշոտն ու Հիւանդ աղջիկը ուշադրութիւն չէին դարձնում այս խօսակցութեան, բայց Տիգրանը բոլորովին վրդովուել էր։ Բայց յիշելով որ մայրը կարող է ծեծուիլ, իւր լացը չէր կարողանում պահել։

Երկար քնած էր հայրը։ Օրը մթնել էր և Հռիփսիմէն այժմ մոմի մօտ նստած շարունակում էր իւր կարը։ Հիւանդ աղջկայ քունը տարաւ և Աշոտն էլ ննջել էր Հիւանդի անկողնում։

Զարթեց հարբածը. առաջ աջ ու ձախ նայեց, յետոյ իւր գրպաններում փնտռեց փողերը և վերջը զայրացած, թէ՝

—Ա՛յ կին, ո՞ւր են փողերը, բե՛ր իսկոյն։

—Փողերը մօտդ են, մեղմ ձայնով պատասխանեց կինը. ինչպէս դրել ես, այնպէս էլ կան։

—Ի՞նչ ես դուրս տալիս, աղաղակեց մարդը՝ շպրտելով մանը փողերը, ես թղթադրամներ ունէի. տուր վեց ռուբլին։

(Պը շարունակուի)։

Թարգ. Գ. Տ. Ա.

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ.

Եօթերորդ համարի մէջ գտնուած զուարճալիքների բացատրութիւնը:

48) Հարևանիդ մի կով ուզիր, որ Աստուած քեզ երկուսը տայ:

49) Լաւ է աչքը դուրս գայ, քան անունը:

50) Գողը որ տանից է լինում, եզն երթկովն են քաշում:

51) Օձի գլուխը ցաւելիս ճամբի մէջ տեղն է վայր ընկնում:

52) պ. Երուանդ Պալեանցին:

Նախկին դարերից քո քաղած պսակ
Իմ մէջ զարթեցրեց հին հին յիշատակ...
Զօրանաս, Երուանդ, շատ ու շատ ապրես,
Միշտ այդպէս սիրուն պսակներ կազմես:
Աստղերիդ մեծն է մեր դիւցազն Հայկ
Երկրորդը նորա որդին Արմենակ,
Արամայիսն և Ամասիա,
Քաջազն Արամ, գեղեցիկ Արա:
Արդարև պսակ, գեղեցիկ սիրուն,
Քաղած աստղերից լուսատու, փայլուն.

Ղ*.

53) Ածուխ:

54)

		Հ		
պ	ա	ր	ա	պ
	տ	ա	տ	
		Հ		
	պ	ա	պ	
կ	ա	ն	ա	դ
		դ		

55) Գիւղացիներից մէկը ունէր հինգ դառը, միւսը—եօթը:

56) 1783—1883 Մ.



հեղուկ
անգոյն
անհոտ
անհամ
թափանցիկ

57) Առաջ. Լ. Մ—Ա.

ԻՄ

ՈՒ

ՔԸ Ա

դանելիքի
նոյնանիշը

ՀԱ

Է

Արդիւնա-
ւէտ բառի
նոյնանիշը

Հ

58) Առաջ. Գէորգեան Ճեմ. ա. լսարանի ուս. Ա. Գաթճանեան.

Լ

Փ

59)

60)



61) (Առաջ Ա. ա.)

Հարկաւոր է գտնել 11 այնպիսի բառեր և նոցա դասաւորել այնպէս, որ եթէ առջ կողմից դէպի ցած կարդալու լինինք, դուրս գայ յայտնի բանաստեղծի ազգանունը, իսկ եթէ ձախ կողմից դէպի ցած՝ դուրս գայ նորա յայտնի բանաստեղծութեան վերնագիրը։ Այդ բառերը նշանակում են՝

1. Ֆրանսիայի ծովեզրեայ քաղաք։
2. Երասխի նոյնանիշը։
3. Հրաբղխային նիւթ։
4. Կոպիտ բառի նոյնանիշը։
5. Որ անուն չունի։
6. Դերանուն։

7. Յունաց նշանաւոր պատգամատեղի։
8. Հայաստանի գետ։
9. Երկոտասան մարգարէներից մինը։
10. Ֆրանսիայի նահանգ։
11. Եգիպտոսի թռչուն։

62) (Առաջ. Պ. Պալեանի.)

Հայ թագաւորի շքեղ դարպասում
Մի ծաղիկ տեսայ դեռ նոր էր ծաղկում,
Ոչ վարդ էր նա ոչ շուշան մանիշակ
Հայ թագաւորին աչքին լոյս միակ։
Թէ յանկանում ես ճանաչել նորա
Այս վերջին տողեր մտադիր կարդա։
Առաջին երեք տառերն հայրական
Տանտիկնոջ ձեռին հարկաւոր ման,
Կամ աւազանի ջրից սրբութեան
Կնքահօր հանած անբիծ երեխան։
Թէ չորրորդ տառով կարդաս՝ կփոխուի
Կրկին պիտանի անօթ կլինի.
Իսկ երկրորդ վանկը օտարից առած
Յատուկ է հայոց արքայազն աղջկանց.
Թէ երկրորդ վանկից մի տառը պակի
Սէր ու միութիւն դաշինք կը կապուի։
Այս ծաղկին շուրջը փառք ու պարծանաց
Զորս հատ թանկագին ակներ են շարուած,
Մինն արժէ վաթսուն, վեցհարիւր երկրորդն
Միւսն երեք հարիւր, երկհազար չորրորդն։
Հայոց օրիորդք այս ծաղկիս նման
Աճեցէք, եղէք ազնիւ պատուական։

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 14 Марта 1883 г.
Типографія М. Вартанянца и К. Тройцк. пер. № 11.

«ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ» և պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» Գրավաճառանոցներում ի միջի այլոց վաճառվում են ԱՌԱՔԵԼ ԲԱՀԱԹՐԵԱՆԻ հետևեալ աշխատութիւնները՝

1) Քերականութիւն աշխարհիկ լեզուի	—	25 կ.
2) Համառօտ գործական Հոգեբանութիւն . . .	1 ր.	— „
3) Ուղեցոյց Հայ—ուսուցչի—(Մեթոդիկայ) . .	1 „	— „
4) Այբբենարան—I տարի	—	4 „
5) Ընթերցարան II տարի	—	20 „
6) Մանկական պարտեզը կամ ծաղկոցը և նորա նշանակութիւնը	—	5 կ.

ՀԱՑՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ որոշել է առաջիկայ 1883 թուականի Սեպտեմբեր ամսից ունենալ հայ օրիորդներից մի որդեգրուհի, Ս. Պետերբուրգում մանկավարժութիւն կամ բժշկականութիւն ուսանելու համար։ Որդեգրուհի լինել ցանկացող անձն աւարտած պէտք է լինի իւր ուսման դասընթացը ԳԻՄՆԱԶԻՕՆՈՒՄ՝ ՆԱԽԱՊԷՍ ՀԱՑՈՑ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԱՒԱՐՏԵԼՈՒՑ ՑԵՏՈՑ։ Այսպիսիք իւրեանց առաջարկութեամբ թող բարեհաճեն դիմելու վարչութեանը, ներկայացնելով թէ՛ Գիմնազիօնի և թէ՛ Հայոց միջնակարգ Ուսումնարանի Վարչութիւններից ստացած վկայագիրներ։

„ՎԱՐԺԱՐԱՆԻ“ Խմբագրութիւնը, փոխադարձաբար ընդունելով Կ. Պոլսում հրատարակուող „ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ“ մանկական թերթի ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ, պատիւ ունի սորանով յայտնելու, որ բաժանորդ գրուել ցանկացողք կարող են դիմել Խմբագրութեանս, վճարելով կանխիկ տարեկան ՉՈՐՍ ռուբլի։

Իմ հանգուցեալ եղբայր ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱՅԵԱՆ ԲԱՀԱԹՐԵԱՆԻ մանրամասն կենսագրութիւնը գրած ունեմ հրատարակելու համար։ Բայց կամենալով աւելի լիակատար և մշակուած դուրս բերել, խնդրում եմ բոլոր ծանօթներից և բարեկամներից՝ անյապաղ հաղորդել ինձ՝ տեղեկութիւններ հանգուցեալի կեանքին և նրա հասարակական գործունէութեան վերաբերեալ։

Հասցէս՝—Шушу, Николаю Б. Багатурьянцъ.

Նիկոլայ Բ. Բահաթրեան.

Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ Թեմական Դպրանոցի տեսչական պաշտօնը թափուր մնալով Պ. Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆԻ մահուամբը, նոյն Դպրանոցի Հոգաբարձութիւնը խնդրում է ցանկացողներին՝ յայտնել Հոգաբարձութեան իւրեանց յօժարութիւնը յանձն առնուլ այդ պաշտօնը։

Դպրանոցի Տեսչի պարտաւորութիւններն են, իբրև նորա մերձաւոր կառավարող՝ հսկել և պահպանող լինել ներքին բարեկարգութեան և յառաջադիմութեան նորին ըստ ամենայն մասանց (Կանոնագր, Դպր. յօդ. 29)։

Դպրանոցի Տեսուչն ընտրի յուսումնական և յարժանաւոր եկեղեցականաց կամ աշխարհականաց՝ աւարտելոց գընթացս ուսման 'Ի Ճեմարանի մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի կամ 'ի Բարձրագոյն ուսումնարանս Տէրութեան (յօդ. 30)։

Տեսչութեան համար թոշակ սահմանուած է տարեկան 1800 ռուբլի, բացի 'ի բնակարանէն և վառելեաց, ևս և միոյ առարկայի ուսուցչութեան ոռճկէն, որ ունի ստանալ առանձին՝ ըստ թուոյ դասուցն (յօդ. 31)։

Դպրանոցի այլ կանոնաց և դրութեան ծանօթանալ ցանկացողներին կը յուղարկուի նորա տպագիր կանոնագրութիւնը։

Նախագահ Խորհրդոյ Հոգաբարձուաց

ՍՈՒՔԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ